

ԱԲԷԼ ԵՒ ԿԱՅԷՆ



ՀԵՂԻՆԱԿՈՎԹԻՆ՝ ՇԱՐԻ ՊՕՏԵՐԻ

Ա.

Սերունդ Աբէլի, պառկէ՛, խըմէ՛, կե՛ր,
Կստուած կը ժպտի ժեզ հանոյալիք:

Սերունդ Աբէլի, քու զոհքդ կըրմայ
Սերովքէին ժի՛քն ընձեռնել միայն:

Սերունդ Կայէնի, տիգմին մէջ, տիգմի՛ն,
Դուն քըշուառօրէն սազա՛ ու մեռիք:

Սերունդ Կայէնի, չարչարա՛նքդ արդեօֆ
Պիսի ունենա՞յ, ունենա՞յ վախճան:

Սերունդ Աբէլի, վարուցան, նախիք
Հունձք կուտան ժեզի, կը պարարսանան:

Սերունդ Կայէնի, ծեր շաւնի մը պէս
Կոռնան աղիքնե՛րդ սնօթաւքիւննին:

Սերունդ Աբէլի, պատրիարքական
— Տաքցուր որովայնի — դիմա՛ցն օնախին:

Սերունդ Կայէնի, ժարայիդդ մէջ դում
Ցուրտէն դոդոզա՛, քըշուա՛ռ շընազայլ:

Սերունդ Արէլի , սիրէ՛ , բազմացիր,
Ծընանիլ ճաղեր կըքնայ ոսկի՛դ ալ :

Սերունդ Կայէնի , սի՛րտ որ կը վառի
Ախորժակներէն ըզգո՞յշ այս վայրագ :

Սերունդ Արէլի , փայտոջիլի պէս
Դուն կը ճարակիս ու կ'անիս արագ :

Սերունդ Կայէնի , ճամբաներուն վրայ
Ընտանիքդ ընդ քարշ ածէ ոգբալի :

Բ .

Սերունդ Արէլի , սատա՛կդ անպայման
Հո՛զը մըլսացող զիրցընէ պիտի :

Սերունդ Կայէնի , աշխատանիդ , աւա՞զ ,
Դեռ չէ կատարուած ըստ բաւականի :

Սերունդ Արէլի , ամօ՛թդ աւասիկ ,
Որսորդին ներէն երկար է պարսուած :

Սերունդ Կայէնի , բարձրացիր երկինք
Եւ վա՞ր զբորէ իր զահէն Ասուած :

Թարդմանութիւն՝ ՀՐԱԶ ԳԱԶԱՐԵՆՑԻ